ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 Նոյեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

170
(2836)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՊ-Ն ՀԱՎԱՔԻ Է ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում այս օրերին թեժ նախապատրաստական աշխատանքներ են ընթանում:

«Ժողովուրդ» օրաթերթն առաջինն էր հայտնել, որ դեկտեմբերի 15-ին եւ 16-ին ՔՊ-ականները տարեվերջյան քաղաքական ժողով են անելու Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Այս օրերին կուսակցությունը պատրաստվում է այդ ժողովին, հրավիրյալների ցանկը, ձեւաչափն են հստակեցնում, օրակարգի վերաբերյալ են քննարկումներ գնում:

Նախատեսվում է, որ այդ օրը ՔՊ-ն ողջ կազմով պետք է ներկա լինի՝ վարչության անդամները, պատգամավորները, նախարարները, մարզպետները եւ այլք:

Բացի կուսակցական քննարկումներից, ՔՊ-ականները նաեւ հանգստին ժամանակ կհատկացնեն:

Մի խոսքով, իշխող կուսակցությունը մտադիր է ամեն բան հավուր պատշաճի անել, որպեսզի Նիկոլ Փաշինյանը հանկարծ դժգոհ չմնա:

ՀՀ վարչապետի աշխատակազմի գնումներն ուսումնասիրելով՝ հանգեցինք այն եզրակացության, որ աշխատակազմը բավականին գումար է ծախսում ներկայացուցչական ծառայությունների համար: Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության պետական գնումների կայքի՝ վարչապետի աշխատակազմը մեկ ամսվա ընթացքում՝ հոկտեմբերի 27-ից մինչեւ նոյեմբերի 27-ը, կնքել է 1 մլն 331 հազար դրամ արժողությամբ ներկայացուցչական ծառայության համար նախատեսված պայմանագիր: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին 212 հազար 950 դրամ է արժեցել ներկայացուցչական ծառայության համար նախատեսված պայմանագիրը: Օգոստոս-սեպտեմբեր ժամանակահատվածում նման ծառայությունների համար պայմանագրեր չեն կնքվել: Հուլիս-Օգոստոս ամիսների նույն պայմանագրերի արժեքը կազմել է 44 հազար 290 դրամ: Հունիս-հուլիս ամիսներին ներկայացուցչական ծառայության պայմանագրի արժեքը կազմել է 1 մլն 323 հազար դրամ: Մայիս-հունիս ամիսներին ներկայացուցչական ծառայությունների համար ծախսվել է 1 մլն 916 հազար դրամ: Ապրիլ-մայիս ամիսներին ներկայացուցչական ծառայությունների համար ծախսվել է 1 մլն 519 հազար դրամ: Մարտ-ապրիլ ամիսներին ներկայացուցչական ծառայությունների համար ծախսվել է 784 հազար դրամ: Փետրվար-մարտ ամիսներին ներկայացուցչական ծառայությունների համար ծախսվել է 1 մլն 177 հազար դրամ: Հունվար-փետրվար ամիսներին ներկայացուցչական ծառայությունների համար ծախսվել է 1 մլն 458 հազար դրամ: Ընդհանուր առմամբ, վերը նշված ամիսների ընթացքում պայմանագրերի արժեքը կազմել է 8 մլն 221 հազար դրամ: Ստացվում է, որ վարչապետն ընդունելությունների համար գումարներ չի խնայում, իսկ ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը քննադատում էր պետության կոպեկները շռայլ ու անիմաստ ծախսելու համար:



Արցախի ՊԲ նախկին հրամանատար Սամվել Բաբայանն այսօր կգնա 44-օրյա պատերազմի ԱԺ քննիչ հանձնաժողով: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նիստն անցնելու է դռնփակ, ներկա կլինեն միայն հանձնաժողովի ՔՊ-ական պատգամավորները, այսինքն՝ քննիչ հանձնաժողովի անդամները Բաբայանին իրենց ուզած հարցերը կտան, պատասխաններ կստանան, սակայն հանրության համար այդ ամենը մութ կմնա: Գաղտնիք չէ, որ Սամվել Բաբայանը, թերեւս, ՔՊ-ականների ամենասիրելի արցախցի գործիչն է, քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի մտերիմն է, ուստի ՔՊ-ականները մտադիր են ջերմ ընդունել ու ճանապարհել նրան: Այսինքն՝ կարող ենք ասել, որ նրան քննիչ հանձնաժողով հրավիրելն ընդամենը ձեւական բնույթ է կրում: Ուշագրավ է, որ հանձնաժողովի ձեւավորվելուց հետո Սամվել Բաբայանը՝ որպես արտախորհրդարանական ուժի ղեկավար, մասնակցում էր դրա աշխատանքներին: Նա հետո հայտարարեց, թե հրաժարվում է հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել, քանի որ «խաղի կանոնները չեն պահպանվում»: Հիմա, փաստորեն, իրավիճակ է փոխվել. Սամվել Բաբայանի համար այլեւս «խաղի կանոնների» հարց չկա, եւ արդեն որպես հրավիրյալ է գալիս քննիչ հանձնաժողով: Հավելենք նաեւ, որ դեկտեմբերի 3-ին արդեն Անդրանիկ Քոչարյանի գլխավորած 44-օրյա պատերազմի ԱԺ քննիչ հանձնաժողովն ավարտում է իր աշխատանքը, ուստի Սամվել Բաբայանը կլինի վերջին հրավիրյալը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԱԾ-Ն մտել է մանկապարտեզներ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Երեւան քաղաքի մանկապարտեզների տնօրենների են տարել ԱԱԾ՝ հարցաքննության, եւ քննությունը ցույց կտա՝ կկալանավորեն նրանց, թե ոչ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ԱԱԾ-ում հարցաքննված տնօրենների մեջ եղել են նախկին պաշտոնյաների կանայք, իսկ թե ով կամ ովքեր են նրանք, կներկայացնենք առաջիկայում: Նշենք, որ ԱԱԾ-ն օրերս հայտնեց՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի մատակարարման պետական գնումների մրցույթներում հաղթող ճանաչված եւ սննդի մատակարարմամբ զբաղվող «Հայկազունք» եւ «Ֆոտոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների փաստացի սեփականատեր Յ.Ա-ն, նշված ընկերություններում վարորդ-առաքչի գործառույթներ փաստացի իրականացնող Պ.Մ-ի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում մեկ միասնական դիտավորությամբ, խաբեության եղանակով կեղծ փաստաթղթերի օգտագործմամբ, առանձապես խոշոր չափերի գումարներ հափշտակելու դիտավորությամբ, միմյանց գործողությունները փոխլրացնելով, տեղական ինքնակառավարման մարմնի կազմակերպության եւ առեւտրային կազմակերպության կողմից տրվող, իրավաբանական նշանակության փաստ հաստատող եւ հատուցման իրավունք վերապահող, տարբեր տեսակի սննդի պահանջարկի եւ մատակարարված լինելու վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող ուռճացված տվյալներ են ներկայացրել: Ըստ ԱԱԾ-ի՝ 2023 թվականի փետրվարից նոյեմբեր ամիսների ընթացքում փոխանցման եղանակով ստացել եւ խաբեության եղանակով հափշտակել են փաստացի չմատակարարված ապրանքների խմբաքանակների դիմաց վճարված՝ առանձնապես խոշոր չափերով գումարները:

ԽՈՍԵՑ

ԻՆՉՈ՞Ւ Է ՎԱՅՐ ԴՐԵԼ ՄԱՆԴԱՏԸ

Օրեր առաջ հայտնի դարձավ, որ ԱԺ նախկին պատգամավոր Գեւորգ Գորգիսյանը վայր է դրել «Լուսավոր Հայաստան» կուսակցության փոխնախագահի լիազորությունները: Կուսակցության որոշմամբ՝ այդ պաշտոնում միաձայն ընտրվել է Դավիթ Խաժակյանը:

Կուսակցությունը ֆեյսբուքյան իր էջում գրում է. «Լուսավոր Հայաստան կուսակցության 27.11.2023թ. կառավարման խորհրդի նիստում Գեւորգ Գորգիսյանը վայր դրեց կուսակցության փոխնախագահի լիազորությունները:

Նիստի ընթացքում առաջադրվեց Դավիթ Խաժակյանի թեկնածությունը փոխնախագահի կարգավիճակում, որն ընտրվեց միաձայն:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը շնորհակալություն է հայտնում Գեւորգ Գորգիսյանին տարիների նվիրական աշխատանքի համար եւ մաղթում ամենայն բարիք: Նորընտիր փոխնախագահ Դավիթ Խաժակյանին կուսակցությունը մաղթում է հաջողություն նոր եւ պատասխանատու կարգավիճակում»:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է Գեւորգ Գորգիսյանի հետ:

-Պարոն Գորգիսյան, ինչո՞ւ կուսակցության փոխնախագահի լիազորությունները դադարեցնելու որոշում կայացրիք, ո՞րն է պատճառը, տարաձայնությունն՞ր են եղել, թե՞ այլ պատճառ կա:

-Տարաձայնություններ չեն եղել, շարունակում եմ մնալ կուսակցության կառավարման խորհրդի անդամ, պարզապես զբաղվածության պատճառով չէի հասցնում կատարել փոխնախագահի պարտականությունները, բացի սա, ժամանակն է սերնդափոխության:

-Այսինքն՝ միայն ժամանակի սղությո՞ւնն էր պատճառը:

-Այո, տարաձայնություններ չեն եղել, բոլոր կուսակցություններում էլ լինում են քննարկումներ, տարբեր կարծիքներ հնչում են, բայց պատճառը դա չի եղել:

-Պարոն Գորգիսյան, «Լուսավոր Հայաստան»-ի հասցեին հաճախ սուր քննադատություններ են հնչում, որ հատկապես Էդմոն Մարուքյանի՝ պաշտոն ստանալուց հետո սկսել եք իշխանությունների թելը թելել, ամեն հարցում աջակցում եք նրանց: Ինչո՞ւ են նման քննադատություններ հնչում, ինչպե՞ս է Էդմոն Մարուքյանի՝ պաշտոն ստանալն ազդել կուսակցության գործունեության վրա:

-Էդմոն Մարուքյանի՝ պաշտոնի նշանակվելուց հետո փոխվել է միայն այն, որ նա ստացել է հնարավորություն հայրենիքին ծառայելու արտաքին ճակատում. ներքին ճակատում մենք միշտ ազատ ենք եղել քննադատություններում:

-Այդ դեպքում ինչպե՞ս կմեկնաբանեք ձեր կուսակցության հասցեին հնչող մեղադրանքները:

-Չես կարող անել մի բան, որը բոլորին դուր կգա. ինչ էլ անես, մի մասը գոհ է լինելու, մի մասը՝ ոչ:

-Իսկ Դուք համաձա՞յն եք գործող իշխանությունների վարած քաղաքականության հետ:

-Մասամբ, քանի որ տեքստերը հիմնականում, ինչ ասում են, ճիշտ են ասում, բայց դրանց իրականացման հետ բազմաթիվ խնդիրներ եմ տեսնում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՎԱԳԱՆԻ

ԱՂԵԿՅԱՆԸ՝ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Սոնա Աղեկյանը երեկ կրկին հրավիրվել է Քննչական կոմիտե եւ հրաժարվել է ցուցմունք տալ:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երբ քննիչը հարցեր է ուղղել Սոնա Աղեկյանին, վերջինս պատասխանել է, որ այս փուլում հրաժարվում է ցուցմունք տալ, քանի որ վստահություն չունի նախաքննական մարմնի գործողությունների մասով, հետագայում կտեսնի՝ քննությունը ինչպես կընթանա, որից հետո արդեն ընթացքը ցույց կտա:

Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Սոնա Աղեկյանը քննիչին հորդորել է նայել միջադեպի տեսանյութերը, որտեղից հետո իրենց ամեն ինչ պարզ կլինի:

Իսկ ի՞նչ էր արել Սոնա Աղեկյանը քաղաքապետարանում միջադեպի ժամանակ:

Ավագանու անդամ Անի Խաչատրյանը ամբիոնից հնչեցրեց հայտարարություններ, որոնք դահլիճում կրքերը թեժացրին:

Ու երբ Անի Խաչատրյանը լքեց ամբիոնը եւ վերադառնում էր նստել իր տեղը, ավագանու անդամ Սոնա Աղեկյանը ջուրը լցրեց վրան:

Հետաքրքիր է՝ արդյոք կոմիտեն այս միջադեպով մինչեւ վերջ կգնա, ու պատասխանատվության ենթարկվողներ կլինեն, թե Հակակոռուպցիոն կոմիտեի օրինակով Ազգային ժողովում պատգամավորների ծեծկռտուքի դեպքի նման այն կկարճի:

Հիշեցնենք, որ ոստիկանությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023 թվականի նոյեմբերի 11-ին՝ Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ՝ ավագանու մի քանի անդամների միջեւ առաջացած տարաձայնության ընթացքում, փոխադարձ հարվածներ են հասցվել, որի ընթացքում, հասարակության նկատմամբ դրսեւորելով անհարգալից վերաբերմունք, հնչել են հայհոյանքներ՝ այդկերպ խախտելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը) հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն, հանգամանքները պարզվում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Փոխվարչապետ Միհր Գրիգորյանն ընդունել է Համաշխարհային բանկի (ՀԲ) Կովկասի տարածաշրջանի տնօրեն Ռոլանդ Փրայսին:

Հանդիպման սկզբում զրուցակիցները քննարկել են ԼՂ-ից բռնի տեղահանված փախստականների հիմնական կարիքները եւ դրանց հասցեագրման ուղղությամբ Կառավարության կողմից մշակված ծրագրերը: ՀԲ տարածաշրջանային տնօրենը վերահաստատել է Հայաստանին աջակցելու ՀԲ պատրաստակամությունը եւ ներկայացրել համագործակցության հնարավոր ուղղություններն ու գործիքները:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել մասնավորապես Հայաստանում ենթակառուցվածքների զարգացման եւ հանրային կառավարման բարեփոխումների շուրջ:

Միհր Գրիգորյանը հանդիպման շրջանակներում ՀԲ տարածաշրջանային տնօրենին ներկայացրել է «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը, դրա հիմնական նպատակներն ու դրա իրագործման պարագայում տարածաշրջանի զարգացման միտումները:

ՆԻՍՏԵՐ ԿԱՆԵՆ



Հաջորդ շաբաթ Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները կգնան խորհրդարան: «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ հաջորդ շաբաթ՝ դեկտեմբերի 5-ից, խորհրդարանը սկսում է իր աշխատանքը: Ի թիվս այլ հարցերի՝ ԱԺ-ում քննարկվելու է նաեւ ՀՀ 2024թ.-ի պետբյուջեն, այն արդեն կդրվի վերջնական քվեարկության եւ կներկայացվի ԱԺ-ի հաստատմանը: Նախատեսվում է, որ Նիկոլ Փաշինյանը եւ նախարարները նույնպես պետք է գնան ԱԺ՝ մասնակցելու բյուջեի քննարկմանը: Նշենք, որ արդեն հաջորդ չորեքշաբթի օրը կառավարության հետ հարցուպատասխանի օրն է, ուստի մինչեւ ուշ երեկո Փաշինյանը եւ նախարարները կլինեն ԱԺ-ում: Եթե արտահերթ նիստեր չլինեն, ապա սա կլինի ԱԺ վերջին հերթական նստաշրջանը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վաշինգտոնը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության իրական հնարավորություն է տեսնում եւ համարում է, որ դրանից կօգտվի ամբողջ տարածաշրջանը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական եւ եվրասիական հարցերով օգնական, դեսպան Ջեյմս Օ'Բրայենը:

«Մենք Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղության իրական հնարավորություն ենք տեսնում: Մեզ ոգեւորում է այն, որ երկու կողմերը միմյանց հետ շփվում են ուղղակիորեն եւ միջնորդների միջոցով: Դա հաշվի առնելով՝ մենք իրական հնարավորություն ենք տեսնում, որից ամբողջ տարածաշրջանը կարող է օգուտ ստանալ: Օրինակ՝ եթե Կենտրոնական Ասիայից առեւտրային հոսքերը լինեին Ադրբեջանի եւ Հայաստանի տարածքով դեպի Թուրքիա, ապա դա զգալի խթան կլիներ այդ առեւտրային ուղու վրա գտնվող բոլոր երկրների համար: Մենք կողջունեինք, եթե այդ հնարավորությունը լիներ դրա (խմբ.՝ խաղաղության համաձայնագրի) մի մասը», - ասել է պետքարտուղարի օգնականը լրագրողների հետ հեռախոսակապով շփման ժամանակ:

Օ'Բրայենը հավելել է, որ եթե նման ուղի չստեղծվի խաղաղ ճանապարհով, ապա ԱՄՆ-ն զգուշացրել է այն հետեւանքների մասին, որ կլինեն այլ կերպ առաջ շարժվելու դեպքում:

«Միեւնույն ժամանակ, եթե որոշում կայացվի դա չանել խաղաղ ճանապարհով, ապա մենք պետք է օգտագործենք հնարավոր բոլոր գործիքները, որպեսզի խուսափենք այդ տեսակի առեւտրային ճանապարհի ստեղծումից: Այսպիսով, մենք կողմերին շատ հստակ ասել ենք, թե ինչ հույս ունենք տեսնել, եւ ասել ենք այլ կերպ առաջ շարժվելու հետեւանքների մասին: Այսպիսով, մենք անհամբեր կսպասենք՝ տեսնելու, թե ինչի կհասնեն կողմերը: Մենք գիտենք, որ նրանք շահագրգռվածություն են հայտնել շատ շուտով խաղաղության համաձայնագիր կնքելու հարցում, եւ կցանկանայինք տեսնել դրա իրագործումը», - ասել է պաշտոնյան:

Միեւնույն ժամանակ ԱՄՆ-ն ողջունում է Հայաստանի Հանրապետություն վարչապետ Փաշինյանի նախաձեռնած բարեփոխումները եւ Արեւմուտքի հետ հարաբերությունների ընդլայնումը. «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է ԱՄՆ պետքարտուղարի եվրոպական եւ եվրասիական հարցերով օգնական, դեսպան Ջեյմս Օ'Բրայենը առցանց ճեպազրույցի ժամանակ:

«Վարչապետ Փաշինյանը շատ խիզախ է գտնվել եւ հստակ հասկացրել, որ ցանկանում է, որ Հայաստանն առաջ շարժվի իր սահմանները բացելու եւ Արեւմուտքի հետ իր հարաբերությունները ընդլայնելու հարցում, որ չի ցանկանում, որ Հայաստանը լիովին կախված լինի Ռուսաստանից, ինչպես նախորդ ղեկավարներն էին դա անում: Նա մի շարք բարեփոխումներ է նախաձեռնել, որոնք պետք է որ շատ խրախուսող լինեն Հայաստանի քաղաքացիների համար, մինչ նրանք շարունակում են արագ տնտեսական աճը, որ ունեցել են վերջին մեկ կամ երկու տարվա ընթացքում», - ասել է Օ'Բրայենը:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻՆ

Երեւանի ավագանու հերթական նիստը տեղի կունենա դեկտեմբերի 26-ին:

Այդ օրը ավագանին քննարկելու է նաեւ համայնքի բյուջեն եւ զարգացման քառամյա ծրագիրը:

Բյուջեն եւ զարգացման ծրագիրն ավագանու անդամներին է ներկայացնում համայնքի ղեկավարը, իսկ ավագանին դրանք հաստատում եւ ընդունում է ձայների պարզ մեծամասնությամբ, այսինքն՝ այդ օրը նիստին ներկա ավագանու անդամների մեծամասնության քվեարկությամբ:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը եւ նրանց հետ կոալիցիա կազմած «Հանրապետությունը»-ը ավագանիում միասին ունեն 32 մանդատ, իսկ ընդդիմադիր թեւից հանդես եկող 3 խմբակցությունները՝ «Ազգային առաջընթաց»-ը, «Մայր Հայաստան»-ը եւ «Հանրային ձայն»-ը, միասին ունեն 33 մանդատ:

Ստացվում է՝ բյուջեն եւ համայնքի զարգացման ծրագիրը կարող են ընդունվել միայն այն դեպքում, երբ ընդդիմադիրները գան, քվորում ապահովեն եւ կողմ քվեարկեն դրան:

Այսինքն՝ քաղաքային իշխանություններին անհրաժեշտ է ընդդիմադիրներից մեկ ձայն ստանալ, որպեսզի ավագանին կարողանա բյուջեն ու զարգացման ծրագիրն ընդունել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ կետը սահմանում է՝ համայնքի բյուջեն չընդունվելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետները կարող է որոշել համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով համայնքի ղեկավարի հետ, կամ համայնքի ղեկավարը՝ հրավիրելով արտահերթ նիստ:

Եթե ավագանին մինչեւ տարվա սկիզբը համայնքի բյուջեն չի ընդունում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը:

Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, ավագանու անդամների թվի ձայների կեսից ավելիով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Համայնքի բյուջեի հաստատման առնչությամբ հրաժարական տալու միջոցով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշում կայացնելու դեպքում համայնքի ղեկավարը հարցը ներկայացնում է կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով:

Այսինքն՝ եթե ընդդիմադիր ֆրակցիաները չգան, չներկայանան եւ չընդունեն բյուջեն, ապա կարող է ընդհուպ մինչեւ քաղաքապետի հրաժարականի հարց բարձրանալ:

Արդյոք ՔՊ-ին կհաջողվի ընդդիմության հետ համաձայնության գալ եւ մեկ ձայն ապահովել, ինչպես եղավ քաղաքապետի ընտրության հարցով ավագանու նիստի դեպքում՝ ցույց կտա ժամանակը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԳԵՐԻՆԵՐԻՆ

Այս ամիս ԿԽՄԿ-ի աշխատակիցները կրկին այցելել են Ադրբեջանի իշխանությունների կողմից ձերբակալված հայերին:

Այս մասին ԱՊԱ-ին հայտնել է ԿԽՄԿ-ի Ադրբեջանի ներկայացուցչության հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Իլահա Հուսեյնովան:

Տեղեկությունների համաձայն՝ ապօրինի պահվող հայերի հետ անհատական հանդիպումներ են տեղի ունեցել, պայմաններ են ստեղծվել նրանց ընտանիքների հետ շփման համար, սակայն չի նշվում, թե ստույգ ում հետ են հանդիպել:

ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾ ԿԿԱՌՈՒՑՎԻ

Երեւանում տրանսպորտային մեծ հոսքերը կանոնակարգելու եւ խցանումները նվազեցնելու նպատակով կկառուցվի նոր՝ Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածը: Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից:

Այն իրար կկապի մայրաքաղաքի երեք վարչական շրջանները՝ հնարավորություն ստեղծելով զգալիորեն կրճատել առկա ճանապարհը:

Նախագիծը կյանքի կոչելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն ու Ասիական զարգացման բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավար Դոնալդ Լամբերտը ստորագրել են վարկային եւ ծրագրի իրականացման համաձայնագրերը:

ԿՄԵԿՆԻ ՎՐԱՍՏԱՆ

Նոյեմբերի 28-ին ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանն աշխատանքային այցով կմեկնի Վրաստան: Այս մասին տեղեկացրին ԱԽ գրասենյակից:

Այցի ընթացքում ԱԽ քարտուղարն ունենալու է աշխատանքային հանդիպումներ:

ԿՄԿՍԻ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Խորհրդարանը հաջորդ շաբաթ՝ դեկտեմբերի 5-ից, կմեկնարկի իր աշխատանքը:

ԱԺ նոր նստաշրջանի օրակարգում 30-ից ավելի հարցեր են, այդ թվում՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամի ընտրություն հարցը, ինչպես նաեւ կշարունակվի ՀՀ 2024թ.-ի պետբյուջեի նախագծի քննարկումը:

Նախատեսվում է, որ այս նստաշրջանում բյուջեի նախագիծը պետք է արդեն վերջնական ընդունվի:

ԱԴՐԲԵՋԱՆԻՑ՝ ՈՒԿՐԱԻՆԱ

Ադրբեջանն Ուկրաինա ականազերծման տեխնիկա է ուղարկել: APA-ն գրում է, որ այս մասին հայտնել է Ադրբեջանի Հանրապետության ականազերծման գործակալության (ANAMA) վարչության նախագահ Վուղար Սուլեյմանովը:

«Ուկրաինայում ականազերծման գործում արդեն գործադրված է ադրբեջանական արտադրության տեխնիկա»,- ասել է նա:

Քանակության եւ պայմանների մասին տվյալներ չկան:

ՄԱՐՏԻ 1

ԿԱՍԿԱԾԵԼԻ ՄԱՀՎԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

4 տարի առաջ՝ 2019 թվականի նոյեմբերի 28-ին, Մոսկվայում կասկածելի հանգամանքներում մահացավ «Մարտի 1»-ի գործով վկա, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության նախկին պետ Աշոտ Կարապետյանը: Մինչ օրս առեղծված է մնում նրա մահը: Բանն այն է, որ 2019 թվականին կասկածելի հանգամանքներում մահանում էին «Մարտի 1»-ի գործով անցնող անձինք:

Աշոտ Կարապետյանի մահվանից երկու ամիս առաջ էլ հայտնաբերվել էր 2003-2008 թվականներին Հայաստանի ոստիկանության պետի պաշտոնը զբաղեցրած Հայկ Հարությունյանի դին՝ գլխի շրջանում հրազենային վնասվածքով: Ոստիկանության նախնական վարկածով՝ տեղի ունեցածն ինքնասպանություն էր: Հարությունյանը եւս «Մարտի 1»-ի գործով վկայի կարգավիճակ ուներ, ու մինչ օրս նրա մահը եւս մնում է առեղծված:

Հիշեցնենք, որ 2019 թվականի նոյեմբերի 28-ին հայտնի դարձավ, որ Ռուսաստանում մահացել է ոստիկանության Երեւան քաղաքի վարչության նախկին պետ Աշոտ Կարապետյանը:

Ըստ ռուսական լրատվամիջոցների հաղորդումների՝ ոստիկանության նախկին պաշտոնյայի մահը վրա է հասել Պյատիգորսկում՝ մասնավոր գարեջրի գործարանում, գազի պայթյունի հետեւանքով:

Ըստ տեղեկությունների՝ պայթյունի հետեւանքով մահացել է նաեւ ոստիկանության նախկին բարձրաստիճան պաշտոնյայի մորեղբայրը:

Ռուսաստանում երկու մարդկանց մահվան առթիվ քրեական գործ էր հարուցվել՝ աշխատանքային պահանջները չբավարարելու հատկանիշներով: Ռուսական լրատվամիջոցները հաղորդում էին, որ գարեջրի գործարանը գազի ցանցին միանալու թույլտվություն չի ունեցել:

49-ամյա Կարապետյանը ոստիկանության համակարգում աշխատել է 1990-ականներից, 2008 թվականի մարտիմեկյան իրադարձությունների ժամանակ էլ զբաղեցրել է ոստիկանության Երեւան քաղաքի վարչության խորհրդային բաժնի պետի պաշտոնը: Հետընտրական արյունալի իրադարձություններից մեկ տարի անց պարգեւատրվել է «Հասարակական կարգի գերազանց պահպանման համար» մեդալով:

Հատուկ քննչական ծառայությունից հայտնել էին, որ Կարապետյանը «Մարտի 1»-ի քրեական գործում վկայի կարգավիճակ ուներ: «Մարտի 1»-ի գործով տուժողի ներկայացուցիչ Սեդա Սաֆարյանը նշել էր, որ Աշոտ Կարապետյանը հետընտրական իրադարձություններին իր մասնակցությունն է ունեցել: «2008թ. փետրվարի 29-ի միջոցառում կոչված «տեղանքի զննություն» օպերացիան եւ դրա ամբողջ գիշերվա ընթացակարգի հետ Աշոտ Կարապետյանն առնչություն ուներ, նա էր զանգել Արմեն Նիկողոսյանին, կանչել ոստիկանություն, այնուհետեւ ոստիկանությունում մենք գիտենք՝ ինչ իրավիճակ է եղել այդ ժամանակ՝ զենքերի հետ կապված, օպերացիան իրագործելու հետ կապված, եւ ժողովրդի դեմ նախահարձակ լինելու հիմքեր ստեղծելու հանգամանքներին վերաբերող քննարկումները եւ բուն դրա իրագործումն է: Որպես ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյա՝ նա եւս առնչվել է այն ամենին, ինչ որ առավոտվա գործողություններում առկա են եղել ոստիկանության բիրտ ուժի կիրառման ժամանակ», - ասել էր նա:

«Մարտի 1»-ի գործով տուժողի ներկայացուցչի գնահատմամբ՝ Կարապետյանը «Մարտի 1»-ի գործով պիտի հարցաքննվեր: Ըստ նրա՝ չի կարող ասել՝ Կարապետյանի մահը կապ ուներ այս իրադարձությունների հետ, թե ոչ. «Չեմ էլ ուզում բացառել այն վարկածը, որ կարող է եւ կապ ունենալ, որովհետեւ զարմանալի զուգադիպությամբ բոլոր այն անձինք, ովքեր Մարտի 1-ի առանցքային գործողությունների կիզակետում եղել են, այս անձինք կամ ինքնասպան են լինում, կամ մահանում եմ, եւ ինչ-որ բան նորմալ չեմ համարում այս ամենի մեջ»:

Ի դեպ, Կարապետյանը հանրության ուշադրության կենտրոնում էր հայտնվել հատկապես ընդդիմադիր Գրիշա Վիրաբյանի գործի շրջանակներում: Վիրաբյանը հայտարարել էր, որ 2004-ին ընդդիմադիր ցույցերին մասնակցելու համար իրեն խոշտանգողների շարքում է եղել նաեւ Աշոտ Կարապետյանը, որն այն ժամանակ Արարատի մարզային վարչության պետի օպերատիվ գծով տեղակալի պաշտոնն էր զբաղեցնում: Կարապետյանի անունը շոշափվել էր նաեւ Եվրադատարանի 2012 թվականի վճռում, որով ՄԻԵԴ-ը Հայաստանին պարտավորեցրել էր 31 հազար եվրոյի փոխհատուցում վճարել:

2016 թվականին՝ Ոստիկանության ՊՊԾ գնդի տարածքը «Սասնա ծռեր» զինված խմբի կողմից գրավելու օրերին՝ Երեւանում մեկնարկած հանրահավաքներից հետո, Կարապետյանը ենթարկվել էր կարգապահական տույժի, ապա ազատվել Երեւանի ոստիկանապետի պաշտոնից: Այդ օրերին ոստիկանությունը հատուկ միջոցներ էր կիրառել ցուցարարների եւ լրագրողների նկատմամբ, տասնյակ մարդիկ վնասվածքներով տեղափոխվել էին հիվանդանոց:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲՈՂՈՔ

«ԱՆՈՐՍԱԼԻ» ՎԱՐՈՐԴԸ ԿՄՆԱ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Երեւանի կենտրոնի՝ «Համեր»-ի «անորսալի» վարորդի գործով ՀՀ վերաքննիչ դատարան հատուկ վերանայման բողոք էր ներկայացվել, սակայն ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը:

Մեղադրյալ Գեղամ Սահրադյանի վերաբերյալ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 15-ի որոշումը թողել են անփոփոխ: Նա կշարունակի մնալ կալանքի տակ:

2023թ? փետրվարի 11-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժին հաղորդում էր ստացվել այն մասին, որ փետրվարի 10-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Հանրապետության հրապարակում Պարեկային ծառայության ծառայողներին է մոտեցել «Համեր» մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը մեքենան լիցքավորելու համար գումար է ապահանջել պարեկներից:

Մերժում ստանալուց հետո, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, նա մեքենան վարել է Աբովյան փողոցով՝ երթեւեկությանը հանդիպակաց, չի ենթարկվել ոստիկանության ծառայողների «կանգ առ» ազդանշանին, մեքենան շարունակել է վարել Արամի, Փ.Բյուզանդի, Վ.Սարգսյանի, Ագանթագեղոսի, Տիգրան Մեծի, Ամիրյան փողոցներով, այդ թվում նաեւ՝ հետիոտնի համար նախատեսված վայրով՝ դիտավորյալ վնասելով փողոցներում կայանված թվով 8 քաղաքացիական մեքենաներ:

Այնուհետեւ նա երթեւեկել է ՀՀ կառավարության վարչական շենքի հանդիպակաց ոչ երթեւեկելի հատվածով, որտեղ, շարունակելով չենթարկվել պարեկային ծառայության օրինական պահանջին, վրաերթի է ենթարկել Պարեկային ծառայության աշխատակցին, դիտավորյալ վնասել Պարեկային ծառայության թվով 3 ավտոմեքենա: Այդ գործողությունները կանխելու համար պարեկային ծառայողներն իրենց ամրակցված ատրճանակներով մոտ տարածությունից մի քանի անգամ կրակել են վերոհիշյալ ավտոմեքենայի անվադողերի ուղղությամբ՝ փորձելով կանգնեցնել այն, սակայն վարորդը շարունակել է երթեւեկությունը, խույս տալով պարեկներից՝ մեքենան թողել է Երեւան քաղաքի Ագաթանգեղոս 7-րդ շենքի կամարանցման տակ եւ դիմել փախուստի:

Վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Համեր» մակնիշի ավտոմեքենան պատկանում է Արարատի մարզի բնակիչ Գեղամ Ս.-Ն-ին, որը եղել է ենթադրաբար թմրանյութի ազդեցության տակ:

Պարզվել էր, որ տեղյակ լինելով որդու՝ թմրամոլ լինելու մասին՝ հայրն ավտոմեքենայի բանալիները թաքցրել է նրանից, սակայն երիտասարդը փնտրել ու գտել է ավտոմեքենայի պահեստային բանալին, որից հետո ավտոմեքենայով մարզից եկել է Երեւան քաղաք: Գործը դատարանում է:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ

ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ դատախազը 2023 թվականի նոյեմբերի 22-ին հանրային քրեական հետապնդումներ է հարուցել «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծված եւ կառավարվող «Ismoke», «Ismoke420» եւ «Marc Emery Market» առցանց խանութ-հարթակների միջոցով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի իրացմամբ եւ փողերի լվացմամբ զբաղված երեք անձի նկատմամբ:

Մասնավորապես՝ քրեական վարույթով պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Վ.Մ.-ն եւ Խ.Ֆ.-ն 2019-2021 թվականներին զբաղվել են առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ Խ.Ֆ.-ի կողմից «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծված եւ կառավարվող «Ismoke», «Ismoke420» եւ «Marc Emery Market» առցանց խանութ-հարթակների միջոցով:

Խ.Ֆ.-ն ապահովել է, որ թմրամիջոցներն առանձնացվեն՝ ըստ քաշերի, փաթեթավորվեն եւ նախապես տեղադրվեն ՀՀ տարածքում գտնվող թաքստոցներում, որից հետո թմրամիջոցների գտնվելու վայրերը լուսանկարահանվել են, ծրագրային հավելվածի միջոցով նշվել դրանց գտնվելու վայրերի աշխարհագրական կոորդինատները:

Վ.Մ.-ն կառավարել է տելեգրամյան խանութ-հարթակները, նամակագրություն վարել թմրամիջոց ձեռք բերելու ցանկություն հայտնած անձանց հետ, պահանջել թմրամիջոցի համապատասխան չափաբաժնի արժեքը կազմող գումարը (ընդհանուր՝ շուրջ 60 մլն 744 հազար դրամ) փոխանցել կրիպտոարժութային դրամապանակներին, ինչպես նաեւ ՀՀ եւ օտարերկրյա էլեկտրոնային դրամապանակներին:

Վճարման անդորրագրերի լուսանկարները գնորդի կողմից փոխանցվելուց հետո Վ.Մ.-ն եւ Խ.Ֆ.-ն գնորդին ուղարկել են թաքստոցներում նախապես տեղադրված՝ տարբեր տեսակի թմրամիջոցների տեղակայման լուսանկարները՝ ճշգրիտ աշխարհագրական կոորդինատներով:

Հավելենք, որ իրենց կողմից կառավարվող «Marc Emery Market» խանութ-հարթակի միջոցով մեկ այլ՝ «Davitvanhoktemberyan» անվամբ գրանցված օգտատիրոջից Խ.Ֆ.-ն եւ Վ.Մ.-ն, իրացնելու նպատակով 2021 թվականի օգոստոսին ապօրինի ձեռք են բերել առանձնապես խոշոր չափերով՝ ավելի քան 80 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց: Դրա մի մասը տեղադրել են Կոտայքի մարզի տարածքում, լուսանկարել տեղադրման վայրը, նշել աշխարհագրական կոորդինատները եւ լուսանկարն ուղարկել «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածում «ՏՆՕՐԷՆՔ» եւ «Origin666» անուններով գրանցված Գ.Ա.-ին ու Հ.Հ.-ին: Վերջիններս, Խ.Ֆ.-ի հրահանգով, ձեռք բերված թմրամիջոցի մի մասը փաթեթավորել եւ թաքցրել են Երեւան քաղաքի ու ՀՀ մարզերի տարբեր հատվածներում:

Վ.Մ.-ն եւ Խ.Ֆ.-ն թմրամիջոցի մնացած մասը՝ 60.39 գրամ ընդհանուր քաշով, հետագայում իրացնելու նպատակով տեղափոխել են Խ.Ֆ.-ի բնակության վայր եւ թաքցրել տան խորդանոցում (թմրամիջոցը հայտնաբերվել է 2021 թվականի օգոստոսի 30-ին կատարված խուզարկությամբ, իսկ Գ.Ա.-ի եւ Հ.Հ.-ի կողմից թաքցված փաթեթներից հայտնաբերվել է ընդհանուր 19,93 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ 49 փաթեթ):

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 76 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԱՆԳԱՌՆԵՐԸ՝ ԻՆՔՆԱՐԺԵՔԻՑ ԹԱՆԿ

Տավուշի մարզպետարանը հայտնում է, որ ընթացքի մեջ է «Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքում եւ բնակավայրերում 24 կանգառի կառուցում» ծրագիրը, այդ նպատակով ավելի քան 49 միլիոն դրամ է ներդրվել: Կանգառները կառուցվում են սուբվենցիոն ծրագրով, դրանում պետական բյուջեն ներդրել է ծրագրի արժեքի 45, իսկ Դիլիջան համայնքը՝ 55 տոկոսը: Մարզպետարանի տվյալներով՝ Դիլիջան քաղաքի եւ այդ համայնքի բնակավայրերի կանգառները գտնվում էին անմխիթար վիճակում, անվտանգության տեսանկյունից թերի էին, իսկ նոր կանգառները ունեն նոր, անվտանգ եւ ժամանակակից տեսք, դրանք կառուցվում են նորմերին եւ չափորոշիչներին համապատասխան: Կառուցման աշխատանքները ավարտական փուլում են: Փոքրիկ, ամբողջությամբ փայտից սարքված կամ մետաղաթիթեղյա ծածկ ունեցող 24 կանգառի կառուցման, տեղադրման համար հատկացվել է ավելի քան 49 միլիոն դրամ, այսինքն՝ ամեն կանգառի համար՝ ավելի քան 2 միլիոն դրամ, մինչդեռ այդ փոքրիկ, հասարակ կառուցվածքով, պարզ տարրերով կանգառները կարելի է պատրաստել ու տեղադրել մի քանի հարյուր հազար դրամով:

ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԸ ՉԵՆ ՎՃԱՐԵԼ

ՀՀ կառավարությունը 2022 թվականի հուլիսի 14-ին ընդունել է N 1086-Ա որոշումը՝ ԿԳՄՍ նախարարության «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը «Տավուշի Պատրիկ Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի վերակազմավորելու մասին: Դրանով քոլեջը ստացել է գյուղատնտեսական ուղղվածություն: Իջեւան քաղաքում գործող այդ քոլեջի տնօրեն Հայկ Բրուտյանը հայտնեց, որ կրթօջախն այժմ ունի 350 ուսանող: Ֆրանսիայի հայկական հիմնադրամի միջոցներով վերանորոգվել, գույքով հագեցվել է քոլեջի ճաշարանը: Նույն հիմնադրամի միջոցներով վերանորոգվել է քոլեջի շենքի 3-րդ 4-րդ հարկերում գտնվող ուսանողական հանրակացարանը, ուր բնակվում են Տավուշի մարզի այլ տարածաշրջանների ու Հայաստանի այլ մարզերի բնակիչ ուսանողներ: Հանրակացարանում բնակվող 30 ուսանողներից 7-ը աղջիկներ են:

Երկրորդ տարին է, ինչ հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի կրթական հենքի վրա քոլեջում ուսուցանվում է «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում)» մասնագիտությունը, այդ մասնագիտացմամբ սովորում է 35 ուսանող: Այս ուսումնական տարվանից այս մասնագիտություն սովորողները Ֆրանսիայի հայկական հիմնադրամի կողմից պետք է ամսական 50 հազար դրամ կրթաթոշակ ստանան, ինչը նրանց շահագրգռում է ֆերմերային գործ ուսանել: Քոլեջի տնօրենից տեղեկացա, որ Ֆրանսիայի հայկական հիմնադրամը չի փոխանցել կրթաթոշակի գումարները, ուստի «Գյուղացիական (ֆերմերային) տնտեսության կազմակերպում)» մասնագիտացմամբ սովորողները դեռեւս չեն ստացել սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսների կրթաթոշակները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ՏՈՒՆ՝ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Արցախից բռնի տեղահանվածները եւս կարող են դառնալ սահմանամերձ գյուղերում ոլեսական աջակցությամբ սեփական տուն կառուցելու ծրագրի շահառու: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին նոյեմբերի 28-ին՝ կառավարության Հումանիտար կենտրոնի ճեղագրույցի ժամանակ, տեղեկացրեց աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը:



Նրա խոսքով՝ ծրագրի շահառուները պետք է լինեն ՀՀ քաղաքացիներ, ամուսնական զույգ եւ սահմանամերձ բնակավայրերից որեւէ մեկում ձեռք բերեն կամ ունենան սեփականության իրավունքով հողատարածք, որտեղ հնարավոր կլինի կառուցել իրենց սեփական տունը:

Փոխնախարարը ներկայացրեց բնակարանային աջակցության պետական ծրագրերից մեկը, որը հնարավորություն է տալիս պետության ֆինանսավորմամբ եւ աջակցությամբ կառուցել սեփական տուն սահմանամերձ որեւէ բնակավայրում:

Ըստ նրա՝ պետք է սեփականության իրավունքով այդ հողատարածքը պատկանի շահառուներին, եւ նախագծման աշխատանքներն ավարտելուց հետո դրանք պետք է ներկայացվեն համապատասխան համայնքային կառույց, որտեղ, ըստ նախագծի, կտրվի շինարարական թույլտվություն:

Փոխնախարարը տեղեկացրեց, որ բանկը շահառուի հաստատումը պետք է ստանա պետական լիազոր մարմնից՝ Միասնական սոցիալական ծառայությունից: Այն տեղի է ունենում ինքնաշխատ եղանակով: Էլեկտրոնային հարցման միջոցով բանկն ուղարկում է հարցումը միասնականն սոցիալական ծառայություն, եւ այնտեղ արագ ճշտվում են դիմորդի տվյալները, ինչի արդյունքում հայտը կամ հաստատվում է, կամ մերժվում:

Նրա խոսքով՝ բանկի հետ պայմանագրի կնքումից հետո վարկավորումը փուլային եղանակով է ներկայացվելու. «Աջակցության չափը կազմում է 16 մլն դրամ, որի շրջանակում մեր քաղաքացիները կարող են նախագծել իրենց նախընտրելի սեփական տունը, բայց սա չի բացառում, որ կարող է լինել ավելի մեծ տարածքով՝ բնակամակերեսով նախագիծ, սակայն այդ դեպքում պետք է քաղաքացիներն իրենց կուտակած գումարները ներդնեն կամ վարկավորվեն նույն վարկի շրջանակներում: Այս դեպքում կարեւոր է քաղաքացու վարկունակության գնահատականը, որը կուսումնասիրի այդ բանկը,- տեղեկացրեց Դավիթ Խաչատրյանը եւ հավելեց:- Տասը տարվա գծով պետության կողմից կվճարվի հիփոթեքի մարումները: Խոսքը մայր գումարի՝ 16 մլն-ի մասին է եւ դրան գումարվող տոկոսագումարների, որոնք պետությունն ամբողջությամբ կվերցնի իր վրա»:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ փոխնախարարը նաեւ տեղեկացրեց, որ այդ ծրագրով վարկավորման գործընթացները սկսվել են մայիս-հունիս ամիսներից, եւ այս պահի դրությամբ վարկավորման ավելի քան 200 հաստատում կան բանկերի կողմից, եւ շատերն արդեն սկսել են շինարարությունը:

Հիշեցնենք, որ կառավարությունը հաստատել է սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագիրը, որը հնարավորություն է տալիս շահառուներին պետական աջակցությամբ կառուցելու անհատական բնակելի տուն սահմանամերձ 80 բնակավայրերում:

Պետության կողմից սուբսիդավորվող չափը վարկի մայր գումարի գծով կազմում է մինչեւ 16 միլիոն դրամ եւ դրա նկատմամբ հաշվեգրվող՝ մինչեւ 13 տոկոս տոկոսագումար: Այսինքն՝ եթե շահառուն բանկից ստանում է 16 միլիոն դրամ վարկ 13 տոկոսով, 10 տարի մարման ժամկետով, ինքը որեւէ պարտավորություն տվյալ վարկի շրջանակում չունի, ամբողջն իրականացնում է պետությունը: Եթե վարկի չափն ավելին է, տարբերության մասով ամսական վճարումներն իրականացնում է իր միջոցներով:

ԱՆՅՈՒԴԱՐՁ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲՅՈՒՋԵՆ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը աշխատանքի առումով թերեւս ամենապասիվն է: Աշխատակիցները հաճախ արշավների են գնում՝ ցույց տալու իրենց սերը բնության, նաեւ աշխատանքի նկատմամբ: Շրջակա միջավայրի պաշտպանության համար բյուջեով հատկացված է 9 մլդ 395 մլն դրամ, իսկ Շրջակա միջավայրի նախարարության բյուջեի կատարողական հայտը կազմել է 6 մլդ 466 մլն դրամ:

Այսպիսով, ուշագրավն այն է, որ նախարարությունը արտասահմանյան պատվիրակությունների ընդունելության ծառայությունների համար վերջին մեկ տարվա ընթացքում ծախսել է 2 մլն 731 հազար դրամ:

Մեկ անձից գնված գնումները կատարվել են այնպիսի ընկերություններից, ինչպիսին է «Կվադրա-Իմպեքս» ՍՊԸ-ն, որը զբաղվում է «Կաֆֆա» սուրճերի վաճառքով:

Հաջորդը «Աստորիա-ինվեստ» ՓԲԸ-ն է, որը Առաջին տպարանի շենքի սեփականատերն է, որը Երեւանի քաղաքապետարանից 2016 թվականի հուլիսին ստացել էր նախագծման թույլտվություն այդ տարածքում հյուրանոցային համալիր կառուցելու նպատակով: Մինչ շինարարության թույլտվություն ստանալը «Աստորիա-ինվեստ»-ը քաղաքապետարանից ստացել է այդ տարածքի «Բ» մասնաշենքի քանդման թույլտվություն, որն իրականացրել էր պայթեցնելու եղանակով: Այժմ այն մեզ հայտնի «Անի գրանդ հոթել»-ն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԿՓՈԽՎԵՆ

2023 թվականի դեկտեմբերի 1-ից ուժի մեջ են մտնում անշարժ գույքի վարձակալության հետ կապված՝ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված որոշ դրույթների փոփոխություններ:

ՊԵԿ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ անշարժ գույքի վարձակալության հետ կապված՝ օրենսգրքով սահմանված պահանջները չպահպանելու դեպքում սահմանվել է տուգանք՝ անշարժ գույքի՝ օրենքով սահմանված կարգով գնահատված՝ շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 500 հազար դրամը:

Մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնելու դեպքում կգանձվի տուգանք 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան մեկ միլիոն դրամը:

Միաժամանակ, կոմիտեն տեղեկացնում է, որ նշված պատասխանատվությունը կիրառելի չէ այն դեպքում, երբ անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները ստացել են պետական գրանցում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ վարձակալության գործարքից ծագող իրավունքները չեն ստացել պետական գրանցում, սակայն անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ օրենսգրքով սահմանված ժամկետում հարկային մարմին է ներկայացվել հայտարարություն, կամ հարկ վճարողը անշարժ գույքի վարձակալությունից ստացվող եկամուտներից օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկել է եկամտային հարկը:

Հարկ է նկատի ունենալ, որ, առանց անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման, վարձակալությունից ստացվող եկամուտներից եկամտային հարկը հաշվարկելը կամ անշարժ գույքի հետ կապված եկամտի ստացման իրավունքի վերաբերյալ հարկային մարմին հայտարարություն ներկայացնելը չի կարող հանդիսանալ վարձակալության հանձնված գույքի նկատմամբ որեւէ իրավունքի ճանաչման կամ վարձակալության գործարքը վավեր համարելու (ճանաչելու) հիմք:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Երեւանի ԳԳՄ Մալաթիա-Սեբաստիա ծառայության աշխատող՝ վերանորոգող փականագործ Կարեն Աշոտի Արշակյանի անվանաքարտը՝ տրված «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից:

ՂԵԿԱՎԱՐ ՉԵՆ ԳՏՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեն իրականացնում է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառի պետական կարգավորումը բնակչության եւ անձնակազմի անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի պաշտպանության եւ Հայաստանի Հանրապետության անվտանգության պաշտպանության նպատակներով:

Ուսումնասիրելով այս կառույցի գործունեությունը՝ տեսնում ենք, որ, պաշտոնական տեղեկատվության համաձայն, վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 10-ին կոմիտե է այցելել, որից հետո այս կառույցի մասին գրեթե ոչինչ հայտնի չէ: ՀՀ կառավարությանն առընթեր այս մարմինը կես տարուց ավելի է՝ ղեկավար չունի: Ղեկավար չունեցող կոմիտեն 2023 թվականի հունվարից մինչեւ նոյեմբերն ընկած հատվածում ձեռք է բերել ամեն ինչ, բացի իր լիազորություններին համապատասխան գնումներից:

Օրինակ՝ներկայացուցչական ծառայությունների համար ծախսվել է 172 հազար 130 հազար դրամ: Ավտոմեքենաների պահպանման ծառայության եւ ավտոմեքենաների անիվների ձեռք բերման համար կոմիտեն ծախսել է 930 հազար 300 դրամ: Տնտեսական ապրանքների ձեռք բերման եւ գրենական պիտույքների համար ծախսվել է 648 հազար 760 դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության ՊՆ զորավարժարաններից մեկում անցկացվել է ՋՈՒ բարձրագույն եւ ավագ սպայական կազմերի ատեստավորման գործընթացի կրակային պատրաստության քննությունը:

ՊՆ-ից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ քննական գործընթացին հետեւել են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար, ատեստավորման առաջին հանձնաժողովի նախագահ Սուրեն Պապիկյանը եւ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ՋՈՒ ԳՇ պետ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանը:

Քննության ավարտին, դիմելով ատեստավորման գործընթացին կամավոր ներգրավված գեներալներին ու բարձրաստիճան սպաներին, նախարար Պապիկյանն ընդգծել է, որ ակնհայտ է այն դրական ազդեցությունը, որ ատեստավորման գործընթացը թողել է ՋՈՒ մարտական պատրաստականության բարձրացման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿՐՈՒՄՆ ՈՒ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Ստեղծվել է ազատ շուկա էներգիա ներկրողների եւ էլեկտրաէներգիա արտադրողների համար. այժմ շուկան ազատ է եւ ցանկացողները կարող են էլեկտրաէներգիա արտադրել, արտահանել ՀՀ-ից: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին նոյեմբերի 28-ին՝ «Հայաստանի էներգետիկայի բնագավառի ներկան եւ ապագան» խորագրով համաժողովի ժամանակ, հայտարարեց ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Հակոբ Արշակյանը:

Ըստ նրա՝ պետական մի շարք ծրագրերը՝ներառյալ օրենսդրական դաշտում աշխատանքները, ուղղված են աջակցելու էլէներգիա արտադրողներին:

«Հայաստանում հարմարավետ միջավայր է ստեղծվում էներգետիկայի ոլորտում ներդրումների համար, ինչի արդյունքում էլ ավելի է բարձրանում երկրի էներգետիկ անվտանգության եւ անկախության մակարդակը:

«Հայաստանի էլեկտրաէներգիայի ոլորտի զարգացման կայուն գրավականն են վերականգնվող էներգետիկ ներուժի տնտեսապես հիմնավորված, արդյունավետ եւ պատասխանատու օգտագործումը, ատոմային էներգետիկայի՝ խաղաղ նպատակներով զարգացումը, էլեկտրաէներգետիկական համակարգի տարածաշրջանային ինտեգրումը, էներգակիրների մատակարարման ուղիների եւ ձեւերի տարատեսակումը, էներգաարդյունավետության եւ էներգախնայողության միջոցառումների ներդրումը, թվային էներգետիկ վերափոխումը: Սրան էն ուղղված բոլոր քայլերը:

Կայուն էներգետիկան երկրի տնտեսության զարգացման կարեւորագույն պայմաններից է՝ուղղված մարդկանց կյանքի բարելավմանը եւ կենսամակարդակի բարձրացմանը»,- ասաց Արշակյանը:

Նրա խոսքով՝ ակնհայտ է, որ Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, էներգետիկայի ոլորտի նկատմամբ առկա է մեծ հետաքրքրություն: «Էներգետիկան հիմքն է արդյունաբերության զարգացման, մարդկանց բարեկեցության, տնտեսական առաջընթացի, պետությունների անվտանգության եւ սուվերենության»,- նշեց ԱԺ փոխնախագահը:

ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով սահմանված է, որ էներգետիկայի ոլորտում քաղաքականությունն ուղղված է լինելու էներգետիկ անկախության եւ անվտանգության մակարդակի բարձրացմանը, սպառողներին էլեկտրաէներգիայի եւ գազի հուսալի մատակարարումների ապահովմանը:

Իսկ մինչեւ 2040 թվականը էներգետիկ բնագավառի զարգացման ռազմավարությունն ուրվագծում է Հայաստանի տեսլականը էներգետիկայի զարգացման ոլորտում, որը խարսխված է ազատ մրցակցային եւ ոչ խտրական, ներառական եւ դիվերսիֆիկացված, էներգետիկ անկախության բարձր մակարդակով, մաքուր եւ էներգախնայող, թվայնացված եւ ինովացիոն, գիտելիքահեն, բարձր տեխնոլոգիատար, կանխատեսելի եւ թափանցիկ, հասանելի, բոլորի համար արդարացի սկզբունքների վրա:

«Ռազմավարության շրջանակներում իրագործված բարեփոխումների արդյունքում 2022 թվականին գործարկված էլեկտրոնային հարթակի օգնությամբ Հայաստանում էլեկտրաէներգիա սպառողին ընձեռվում է հնարավորություն մատակարարին ինքնուրույն ընտրելու համար՝ պայմանագիր կնքելու եւ առեւտուր անելու: Այս կարեւոր բարեփոխումը էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման մասին է: Ստեղծվել են նոր հնարավորություններ ներդրողների եւ էլեկտրաէներգիա արտադրողների համար: Շուկան այժմ ազատ է, ցանկացողները կարող են էլեկտրաէներգիա արտադրել, ներկրել եւ արտահանել Հայաստանից»,- հավելեց Հակոբ Արշակյանը:

Նա մանրամասնեց, որ պետական մեկ այլ ծրագրով հնարավոր է տեղադրել մինչեւ 10 միլիոն դրամ արժողությամբ անհատական արեւային համակարգեր՝ արտոնյալ վարկային պայմաններով:

Արշակյանը քաղաքացիների ուշադրությունը հրավիրեց այս ծրագրի վրա՝ կոչ անելով օգտվել դրանից: «Այն իսկապես կարող է փոխել թե՛ անհատական էլեկտրական համակարգեր ունեցողների, թե՛ պետության կախվածությունը էներգետիկ միջավայրի տեսանկյունից»,- ասաց Ազգային ժողովի փոխնախագահը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՍԱՐՔԵՐ ՉԵՌՔ ԿԲԵՐԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով՝ հաստատվել է գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության երաշխավորված սարքերի/սարքավորումների ցանկը:

Այդ մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ԱԺ-ից:

Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի արդյունքում հայաստանյան 19 պետական գիտական կազմակերպություններ եւ բուհեր Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ ձեռք կբերեն 60 սարք/սարքավորում՝ ընդհանուր 930 միլիոն դրամ արժողությամբ:

Ի գիտություն շահառու կազմակերպությունների՝ անհրաժեշտ է մինչեւ ս.թ. նոյեմբերի 30-ը Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի հետ կնքել Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագիրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ

«ՀՀ-ն լիակատար ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ ԼՂ-ն մեջը»,-այս մասին նոյեմբերի 28-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասել է ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը:

«Սա արդեն մի 8 անգամ ասել ենք վերջին մեկ-երկու տարվա ընթացքում: Էլ ի՞նչ է պետք ասել»,- ընդգծեց Սիմոնյանը:

Նա նաեւ հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի հարց ՀՀ-ի համար գոյություն չունի. «Ի՞նչ է նշանակում՝ Արցախի հարցը լուծված է: Ո՞րն է Արցախի հարցի հանգուցալուծումը կամ չլուծվածությունը. Հայաստանի Հանրապետությունը նման հարց հիմա չունի»,- ավելացրեց ԱԺ նախագահը:

Ըստ նրա՝ այսօր ՀՀ-ի համար գլխավորը Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրումն է:

Հիշեցնենք, որ 2023 թ. մայիսի 22-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը մամուլի ասուլիսի ժամանակ բացատրեց, որ ՀՀ-ն ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ 86,6 հազար քառակուսի կմ տարածքով. այն ներառում է նաեւ Լեռնային Ղարաբաղը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆԱԽԱԴԻՏՈՒՄ

ՀԱՅՏՆԻ ՀՅՈՒՐԵՐՆ ՈՒ ՈՒՇԱԳՐԱՎ ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐԸ

Նոյեմբերի 30-ից մեծ էկրաններ կբարձրանա «Օպերացիա «Մեծապատիվ մուրացկաններ»» ֆիլմը, որի նախադիտումը կայացավ նոյեմբերի 26-ին «Մոսկվա» կինոթատրոնում:

Որպես ֆիլմի գլխավոր դերակատարներ հանդես են եկել Ռաֆայել Երանոսյանը, Քեն Դավիդյանը, Լուիզա Ներսիսյանը, Վիկտորիա Սահակյանը, Սոս Ջանիբեկյանը, Լեւոն Հախվերդյանը, Արսեն Սաղաթելյանը, Անի Խաչիկյանը, Գրիշա Աղախանյանը եւ այլք:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ֆիլմի գաղափարն ի սկզբանե ծնվել է Արշալույս Հարությունյանի մոտ, իսկ սցենարը գրել է Նարեկ Ավագյանի հետ: Պրոդյուսերն Արման Միտոյանն է:

«Մեծ ու բազմաժանր դերասանների շնորհիվ հասկացանք, որ եթե այսպիսի մարդկանց ենք հավաքել մի տեղ, ուրեմն կարելի է ստեղծել այսպիսի նախագիծ, որը, կարծում եմ, իր ժանրի մեջ նորություն է»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց պրոդյուսերը:

Իսկ ռեժիսոր Արշալույս Հարությունյանի կարծիքով՝սա իր կյանքի ամենաերկար նախագիծն էր. «Սա իմ կյանքի երեւի ամենաերկար, ձգված նախագիծն է եղել: Որքան պրոցեսը ձգվեց, այնքան երկար կարողացա վայելել այն մարդկանց, ովքեր աշխատել են այս նախագծի շուրջ»:

Հավելենք, որ ֆիլմի հերոսը չկայացած ռեժիսոր է, որին թատերական ինստիտուտից հեռացրել են իր անհավանական եւ համարձակ մտքերի համար: Բայց քանի որ թատրոնում դա իրեն չի հաջողվում, նա որոշում է իր խելահեղ մտքերն իրագործել կյանքում: Նա իր շուրջն է հավաքում իր նման արկածախնդիրների՝ աճպարար, հակեր, նախկին ոստիկան, իր սիրելի աղջկան, որը մասնագիտությամբ լրագրող է, եւ բոլոր այս մարդկանց հետ որոշում իրականացնել «Մեծապատիվ մուրացկաններ» օպերացիան, որն էլ դառնում է իր կյանքի ամենաեկամտաբեր եւ ամենասպասված ստեղծագործությունը:

Անդրադառնալով Քեն Դավիդյանին՝ռեժիսորը նշեց, որ հենց նրան էր տեսնում տվյալ դերում. «Այս ֆիլմում կինոսիրողը կտեսնի իրեն արդեն ծանոթ դերասաններին բոլորովին այլ տեսանկյունից եւ կբացահայտի նոր ու տաղանդավոր դերասանների: Պետք է նշեմ, որ ֆիլմում 300-ից ավել դերասան է նկարահանվել, որոնցից կցանկանամ առաձնացնել Քեն Դավիդյանին, որն իր խաղով, մտքով, հումորի զգացումով յուրահատուկ հմայք, համ ու հոտ հաղորդեց ֆիլմին: Շատ հետաքրքիր, խարիզմատիկ եւ գրեթե անկառավարելի դերասան է: Միայն այն հանգամանքը, որ Քենը հայերեն չէր կարդում, ուներ բոլորովին ուրիշ մենթալիտետ եւ լեզվամտածողություն, բավականին դժվարացնում էր պրոցեսը, բայց մեզ շատ արագ հաջողվեց զգալ ու հասկանալ միմյանց: Նա հաճախ ափսոսանք էր հայտնում, որ ես Հոլիվուդում չեմ, իսկ ես խոստովանում էի, որ եթե ինքը լիներ Հայաստանում, ես մեծագույն սիրով անդադար կաշխատեի իր հետ: Իսկապես շատ ուրախ եմ, որ Քեն Դավիդյանը համաձայնեց նկարահանվել ֆիլմում. նա իր ներկայությամբ հարստացրեց մեզ բոլորիս»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՆՇՈՒՄ Է ՏԱՐԵԴԱՐՁԸ

Երեկ Հայաստանի ազգային հավաքականի կիսապաշտպան՝ նիգերական Ջոս քաղաքում ծնված Ուգոչուկվու Իվուն նշում է ծննդյան 24-ամյակը: Ֆուտբոլիստը ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում կիսվել է ընկերների, հարազատների, երկրպագուների ծննդյան շնորհավորանքներով:

«Աստվածն ամենամեծն է...Ծնդունս շնորհավոր»,- սոցիալական ցանցերի իր էջերում կիսված անձնական լուսանկարներին կից գրել է Իվուն:

Հավելենք, որ մինչ Հայաստանի ազգային հավաքականում խաղալը Ուգոչուկվու Իվուն 2017-ին պայմանագիր է ստորագրել Վանաձորի «Լոռի» ֆուտբոլային ակումբի հետ: Այդ տարի թիմը դարձել է Հայաստանի առաջին խմբի առաջնության չեմպիոն: 2019/2020 մրցաշրջանի մի հատվածը Իվուն վարձակալական հիմունքներով անցկացնում է «Փյունիկ»-ում, այնուհետեւ տեղափոխվում «Լոռի», որտեղ էլ ավարտում է մրցաշրջանը՝ անցկացնելով 7 խաղ եւ խփելով 2 գոլ: 2020 թվականի ամռանը ֆուտբոլիստը պայմանագիր է ստորագրում «Ուրարտուի» հետ: Ուգոչուկվու Իվուն հրավիրվել է նաեւ Նիգերիայի Մ-20 տարեկանների հավաքական: 2022/23 մրցաշրջանում ֆուտբոլիստն «Ուրարտուի» կազմում դարձել է Հայաստանի չեմպիոն եւ գավաթակիր:

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՑ

ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքում անցկացվող շախմատի Sinquefield Cup ավանդական մրցաշարի 6-րդ տուրում Հայաստանի հավաքականի նախկին առաջատար Լեւոն Արոնյանը (ԱՄՆ) սեւ խաղաքարերով մրցեց ամերիկացի Ուեսլի Սոյի հետ եւ պարտություն կրեց:

Ուեսլի Սոն 6 պարտիայից հետո 4 միավորով միանձնյա գլխավորում է մրցաշարային աղյուսակը: Արոնյանը 2,5 միավորով կիսում է 5-6-րդ տեղերը ռուսաստանցի Յան Նեպոմնյաշչու հետ: Նրանք անցկացրել են 5-ական պարտիա:

Երկրորդ եւ երրորդ տեղերում գտնվող ամերիկացիներ Ֆաբիանո Կարուանան ու Լենիեր Դոմինգես Պերեսը 5-ական պարտիա են անցկացրել են վաստակել են 3-ական միավոր: Նույնքան միավոր ունի չորրորդ տեղում գտնվող ֆրանսիացի Մաքսիմ Վաշիե-Լագրավը, որն անցկացրել է 6 պարտիա:

Նախորդ տուրերում Լեւոն Արոնյանը ոչ-ոքի էր խաղացել ֆրանսիացի Մաքսիմ Վաշիե-Լագրավի, ամերիկացի Ֆաբիանո Կարուանայի, ռուսաստանցի Յան Նեպոմնյաշչու հետ, պարտության մատնել Ֆրանսիան ներկայացնող իրանցի Ալիռեզա Ֆիրուջային:

Sinquefield Cup-ը Grand Chess Tour-ի հերթական փուլն է, մրցանակային հիմնադրամը 350 հազար դոլար է:

ԳՆԱՀԱՏԱՆՔ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»-Ն ՈՒ ArmLur.am-Ը՝ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐ

Մեծարման երեկո, որը տնտեսության ու գիտության առաջատար ընկերություններ եւ ականավոր անհատների գնահատանքն է: Մրցանակաբաշխության համար հիմք են հանդիսացել «Էմոիրիկա» հեսազոտական ընկերության կատարած սոցիոլոգիական հարցումները եւ փորձագիտական եզրակացությունները:

Անվանակարգերում ներկայացված էին ՀՀ տնտեսության՝ արդյունաբերության, արտադրության, SS եւ մի շարք այլ ճյուղերի առաջատարները:

«THE LEADER 2023» մրցանակի արժանացան անձնային բարձր որակական հատկանիշներով օժտված եւ սեփական գիտելիքներն ու կարողություններն ի նպաստ երկրի շահերի ծառայեցնող անհատներ՝ տնտեսագետ, գիտնական, գործարար Կարեն Ասատրյանը եւ «Դայմոնդ սթայլ» ընկերության հիմնադիր-տնօրեն, կին առաջնորդ Նարինե Չարչյանը:

Հարցումների արդյունքում մսամթերքի եւ կաթնամթերքի արտադրության մեջ առաջատարներն են «Բեկոն» եւ «Թամարա» ընկերությունները, ալկոհոլային խմիչքների արտադրության մեջ առաջատարի դիրքում է Երեւանի շամպայն-գինիների գործարանը: Արտադրության մեջ բարձր վարկանիշ ունեցող ընկերություններ ճանաչվեցին խոշոր արտադրողներ «Սարանիստ» եւ «Օվալ պլաստիկ» ընկերությունները:

Կարեւորելով Հայաստան-Սփյուռք համագործակցությունը՝ անվանակարգերում ներկայացված էին նաեւ միջազգային հարթակում խոսուն դերակատարում ունեցող ինչպես հայկական Beneluxe Vodka, Villa La Bella ընկերությունները, այնպես էլ միջազգային կազմակերպություններ, ինչպես աշխարհի ավելի քան 90 երկրում առաջատար Herbalife բալանսավորված սնունդը:

Արդեն ավանդույթ է դարձել՝ «Վարկանիշ» ընկերության կողմից կազմակերպվող մեծարման երեկոներն ամփոփվում են հաճելի անակնկալով: Այս անգամ եւս «Էնի Վիշ» տուրիստական ընկերությունը ամենահաջողակ հանդիսատեսի համար պատրաստել էր հաճելի անակնկալ՝ուղեւորություն դեպի Իտալիա:

Միջոցառման ինֆորմացիոն գործընկերն էր «Ժողովուրդ» օրաթերթը եւ ArmLur.am լրատվական կայքը, որի խմբագիրները՝ Քնար Մանուկյանն ու Սոնա Գրիգորյանը, ստացան շնորհակալագիր իրենց կատարած աշխատանքի համար:

● *Նոյեմբերի 30-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Իշամեղու» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ցանկանում եմ ալիմենտի բռնագանձման նպատակով դիմել դատարան, սակայն փաստաբանները շատ գումար են ուզում. կա՞ արդյոք անվճար տարբերակ:

Թեհմինա Ղազարյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անվճար իրավաբանական օգնություն ստանալու եւ ալիմենտի բռնագանձման նպատակով դատարան դիմելու հարցում օգնություն հնարավոր է հայցել ՀՀ հանրային պաշտպանի գրասենյակում: Փաստաբանների պալատի համակարգում գործող հանրային պաշտպանի գրասենյակն անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերում միայն հետեւյալ սոցիալական խմբերին՝

1) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին,
2) 1-ին եւ 2-րդ խմբի հաշմանդամներին,
3) դատապարտյալներին,
4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին,
5) Հայրենական մեծ պատերազմի եւ Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին,
6) գործազուրկներին,
7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին,
8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց,
9) փախստականներին,
10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին,
11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում (սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաեւ, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն, չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց):

ՀՀ արդարադատության նախարարություն

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Պարտքերս չփակելու հետեւանքով կալանք են դրել միակ բնակարանիս վրա եւ ցանկանում են աճուրդով վաճառել: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Ալիսա Ասրյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Նախեւառաջ պետք է արձանագրել, որ դեռեւս 01.03.2017 թ.-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների արդյունքում պարտապանին պատկանող միակ բնակարանը, որի շուկայական արժեքը հավասար կամ ցածր է ընդհանուր 4,900,000 ՀՀ դրամից, համարվում է բռնագանձման ոչ ենթակա գույք, ուստի այն չի կարող իրացվել պարտապանի պարտավորությունների համար:

Բնակարանը համարվում է անձի միակ կացարանը, եթե անձի անունով այլ անշարժ գույք (բնակարան կամ բնակելի տուն) գրանցված չէ: Իսկ եթե միակ բնակարանի շուկայական արժեքը բարձր է վերոնշյալ գումարի չափից, ապա բնակարանի իրացումից հետո Ձեզ պետք է վերադարձվի միակ բնակարանի իրացման համար նախատեսված վերոնշյալ գումարը:

Այս կանոնները չեն գործում այն դեպքերում, երբ՝

- բնակարանը գրավադրված է եւ հանդիսանում է գրավի առարկա,
- պարտքի գումարը հանդիսանում է ալիմենտային գումար կամ կյանքին կամ առողջությանը կամ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման գումար:

Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հարկ է նշել, որ վերոգրյալ փոփոխությունը տարածվում է օրենքի փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո հարուցված կատարողական վարույթների վրա, այսինքն՝ մինչեւ 01.03.2017թ. հարուցված կատարողական վարույթներով պարտապանին պատկանող միակ բնակարանը համարվում է բռնագանձման ենթակա գույք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Թբիլիսիում բացվել է Արամ Խաչատրյանին նվիրված հուշատախտակ: Հուշատախտակը տեղադրվել է Ուզնաձե 93 հասցեում, որտեղ 1906-1922 թվականներին ապրել է աշխարհահռչակ կոմպոզիտորը:
Եղանակի տեսություն

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 7 - 10 - 1 + 4
Կոտայքի լեռներ	- 4 - 9 - 2 + 2
Կոտայքի նախալեռներ	0 + 2 + 4 + 8
Գեղարքունիք	- 4 - 9 0 - 5
Լոռի	- 2 - 6 - 1 + 4
Տավուշ	- 1 + 3 + 5 + 9
Արագածոտնի լեռներ	- 2 - 6 0 + 3
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 3 + 6 + 10

Արարատ	+ 2 + 5 + 7 + 10
Արմավիր	0 + 3 + 6 + 9
Վայոց ձորի լեռներ	- 3 - 7 - 3 + 1
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 8 + 5 + 9
Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 + 14 + 17
Սյունիքի նախալեռներ	0 - 4 + 6 + 9
ԼՂՀ	+ 1 + 6 + 9 + 12
Երեւան	+ 6 + 8 + 11 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*